ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«06» փետրվարի 2020թ. Դաշտ համայնք

2020 թվականի փետրվարի 6-ին կայացավ ՀՀ Արմավիրի մարզի Դաշտ համայնքի անդամների ընդհանուր նիստը՝ համայնքի ղեկավարի կողմից 2019 թվականի ընթացքում իրականացված աշխատանքների վերաբերյալ: Նիստին մասնակցում էին համայնքի 18 անդամներ, ավագանու անդամներ, մանկավարժներ, համայնքապետարանի աշխատակազմի անդամներ:

Նիստին մասնակցում էր ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի Տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ Արսեն Ղուկասյանը:

Նիստը վարում էր Դաշտ համայնքի ղեկավար Հրանդ Պետրոսյանը, արձանագրումն իրականացնում էր համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետի պաշտոնակատար Լիլյա Ղասաբյանը:

ԶԵԿՈՒՑՈՒՄ

ՀՀ Արմավիրի մարզի Դաշտ համայնքի ղեկավարի կողմից 2019 թվականի ընթացքում կատարված աշխատանքների վերաբերյալ

06.02.2020թ.

Հարգելի համայնքի բնակիչներ և հյուրեր.

ՀՀ Արմավիրի մարզի Դաշտի համայնքապետարանը ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներով՝ ձեր ուշադրությանն է ցանկանում ներկայացնել 2019 թվականի ընթացքում իրականացված աշխատանքների վերաբերյալ տեղեկատվությունը՝ ըստ առանձին բնագավառների:

Համայնքն ունի 302.28 հա հողատարածք, որից 198.45 հա գյուղատնտեսական նշանակության են: Բնակչության թիվը համայնքում կազմում է 1040 մարդ, տնտեսությունների քանակը՝ 287:

2019 թվականի ընթացքում համայնքում ծնվել են 7 երեխաներ:

Համայնքապետարանը կազմակերպել է և Ազգային վիճակագրական ծառայության Վաղարշապատի տարածքային բաժին է ներկայացրել աշխատակազմի միջոցով իրականացված անասունների գլխաքանակի և ցանքատարածությունների հաշվառումը, յուրաքանչյուր ամսվա ստացած բերքի հաշվառման ցուցանիշները, աշնանացան և գարնանացան ցանքատարածությունների բերքատվության ամսական արդյունքները:

Սոցիալ-տնտեսական բնագավառ

Դաշտի համայնքապետարանը 2019 թվականի ընթացքում կազմակերպել է որոշակի աշխատանքներ՝ համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական վիճակի բարելավման նպատակով: Հնարավորության սահմաններում համայնքի բյուջեի հաշվին իրականացվել են սոցիալապես անապահով ընտանիքներին ֆինանսական օգնություն ցուցաբերելու աշխատանքներ: 2019 թվականի ընթացքում Դաշտ համայնքի 6 անապահով բնակիչների տրվել է դրամական օգնություն: Դրամական օգնությունը տրվելիս հաշվի է առնվել համայնքի բնակիչների սոցիալական վիճակը: Դաշտ համայնքի ղեկավարին ուղղված բոլոր բնակիչների դիմումները քննության են առնվել ավագանու անցկացրած նիստերում:

Համայնքում մեծ ուշադրություն է հատկացվում երիտասարդներին, նրանց համար հետաքրքիր միջոցառումների կազմակերպմանը: Մարտ ամսին կազմակերպվել է միջոցառում համայնքի կանանց Մարտի 8-ի առթիվ: Մայիս ամսին կազմակերպվել է տոնական միջոցառում մայիսյան տոների կապակցությամբ, իսկ օգոստոսին՝ Սուրբ Աստվածածնի Վերափոխման տոնի առթիվ ճաշկերույթ է կազմակերպվել համայնքի բնակիչների համար:

Առանձնակի ուշադրության են արժանացել նաև համայնքի մանկահասակ տարիքի երեխաները: Համայնքի նախադպրոցական տարիքի երեխաները հաճախում են Արագածոտնի մարզի Օշականի «Գայանե» մանկապարտեզ: Այդ առիթով համայնքի բյուջեի հաշվին գնվել և վերոնշյալ մանկապարտեզին է նվիրաբերվել գույք՝ մանկական սեղաններ և աթոռներ:

Դեկտեմբեր ամսվա վերջին Ամանորի առթիվ կազմակերպվել է միջոցառում, որի ժամանակ համայնքի 0-12 տարեկան բոլոր երեխաներին բաժանվել են նվերներ՝ Ամանորի տոպրակների տեսքով:

Մասնակցել ենք նաև ՀՀ կառավարության աջակցությամբ ֆինանսավորվող սուբվենցիոն ծրագրերին, որի արդյունքում համայնքի և ՀՀ պետական բյուջեի համատեղ ֆինանսավորմամբ ձեռք ենք բերել գյուղատնտեսական աշխատանքներ իրականացնող տրակտոր: Տրակտորի գնվել է 60% համայնքի բյուջեի խնայված միջոցների և 40% ՀՀ կառավարության կողմից սուբվենցիոն ծրագրի շրջանակում տրամադրված գումարի շնորհիվ: Արդյունքում համայնքն այժմ ունի սեփական գյուղատնտեսական տեխնիկա, որի շահագործման համար այս տարի նախատեսել ենք նույն՝ սուբվենցիոն ծրագրին մասնակցության շրջանակներում ձեռք բերել գյուղատնտեսական տեխնիկայի համար անհրաժեշտ գործիքներ:

Քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառ

2019 թվականի ընթացքում համայնքում պարբերաբար իրականացվել են աղբահանության աշխատանքներ: Ապրիլ, մայիս և հուլիս ամիսներին բնակիչների հետ կազմակերպվել է շաբաթօրյակ:

Նաև սիստեմատիկ իրականացվել է փողոցների լուսավորության աշխատանքը: Վերանորոգվել է համայնքի լուսավորության ցանցը:

Պաշտպանության բնագավառ

Աջակցել ենք նաև էջմիածնի զինվորական կոմիսարիատի գործունեությանը՝ տրամադրելով հնարավոր բոլոր անհրաժեշտ տեղեկությունները և փաստաթղթերը համայնքում զորակոչի ենթակա անձանց վերաբերյալ:

Ֆինանսների բնագավառ

Հաշվետու տարվա ընթացքում օրենքով սահմանված կարգով Դաշտ համայնքապետարանի աշխատակիցների կողմից կազմակերպվել են նաև հողի հարկի, գույքահարկի, տեղական տուրքերի հավաքագրման և վերահսկման աշխատանքներ: Ստորև ներկայացնում ենք բյուջեի կատարողականին վերաբերող տեղեկություններ.

1. Վարչական բյուջեի եկամուտների կատարողականը կազմում է 100.0%:
2. Հարկային եկամուտների ընդհանուր կատարողականը 108.4 % է, որից հողի հարկ՝ 107.4 %, գույքահարկը՝ շենքերի-շինություններինը՝ 126.1%, փոխադրամիջոցներինը՝ 108.3 %:
3. Ոչ հարկային եկամուտների մեջ գույքի վարձակալությունից գանձված վարձավճարը կազմում է 73.5%:
4. Տեղական տուրքը գանձվել է 102.2 %:
5. Համայնքի բյուջեի ծախսերի կատարողականը կազմում է 93.9 %:
6. Համայնքի բյուջեի եկամուտներից սեփական եկամուտների կատարողականը կազմում է 100.1 %:

Համայնքապետարանն օգտագործել է բոլոր հնարավորությունները համայնքի բնակիչների կողմից բարձրացված հարցերին սպառիչ պատասխաններ տալու գործում, քանի որ վերջիններիս հետ մշտապես գտնվում է անմիջական շփման մեջ: Հնարավորությունների սահմանում աջակցել ենք բնակչությանը այլ հիմնարկ-ձեռնարկությունների հետ ունեցած խնդիրների համահարթեցմանը՝ ցուցաբերելով խորհրդատվական օգնություն, ինչպես նաև ապահովել է նրանց փաստաթղթային շրջանառությունը, լինի դա տեղեկանքների, թե այլ փաստաթղթերի տեսքով: Շուրջ 400

բնակիչներ հաշվետու տարվա ընթացքում ստացել են բազմաբնույթ բովանդակությամբ տեղեկանքներ:

2019 թվականի ընթացքում Դաշտի համայնքապետարան տարբեր հիմնարկություններից մուտքագրվել են 326 պաշտոնական բազմաբնույթ գրություններ, որոնք պատասխանվել են ըստ անհրաժեշտության:

Նաև օրենսդրությամբ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն պետական իրավական փորձաքննության ենք ուղարկել համայնքի բյուջեի փոփոխությունները, համայնքի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը, տեղական տուրքերի դրույքաչափերը, համայնքի բյուջեն, իսկ հողային հաշվեկշիռը գործող օրենսդրությանը համապատասխան ուղարկել ենք ՀՀ ԿԱԱԳ կադաստրի պետական կոմիտեի մարզերի միավորված ստորաբաժանում՝ վերջիններիս համաձայնեցումը ստանալու նպատակով:

Ցանկացած նորամուծություն օրենքի բնագավառում, որը վերաբերում է համայնքի բնակիչների առջև դրված հիմնախնդիրների լուծմանը, հողի հարկի և գույքահարկի, տեղական տուրքերի մուծմանը, ինչպես նաև այլ կարևոր հարցերի, բնակիչներին տեղեկացրել են Դաշտի համայնքապետարանի աշխատակիցները:

Համայնքի ղեկավարությունը նոր՝ 2020 թվականի ընթացքում նախատեսել է իրականացնել աշխատանքներ՝ ի նպաստ համայնքի բնականոն զարգացման:

Դաշտ համայնքի ղեկավար՝ _____ Հրանդ Պետրոսյան

ԳՅՈՒՂԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Համայնքի համար առաջնահերթ լուծման խնդիր է հանդիսանում համայնքի չորս՝ փողոցների գազաֆիկացման խնդիրը, որոնք են՝ Գարեգին Նժդեհ փողոցի մեկ հատվածը, Բարեկամության, Համերաշխության, Բարեգործների փողոցները: Սա շատ տարողունակ և գումար պահանջող խնդիր է, որի լուծման համար ակնկալվում է ՀՀ կառավարության աջակցությունը:

Հիմնախնդիրների մեջ պակաս կարևոր չէ նաև ոռոգման ջրագծերի հիմանանորոգման խնդիրը, որի լուծման համար անհրաժեշտ է երկաթբետոնե կիսախողովակների անցկացուման միջոցով կառուցել նոր ոռոգմոն առուներ:

Առաջնահերթ հիմնախնդիր է նաև համայնքի Մշակույթի տան վերանորոգման հարցը:

Մեզ համար կարևոր խնդիր է հանդիսանում նաև համայնքում մանկապարտեզի բացակայությունը:

Հիմնախնդիր է նաև համայնքի միջհամայնքային ճանապարհների ասֆալտապատման աշխատանքները:

Դաշտ համայնքի ղեկավար՝ _____ Հրանդ Պետրոսյան

«06» փետրվարի 2020թ.